

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ**

Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները միջազգային իրավունքի սուբյեկտների վարքագծի հիմքում ընկած ելակետային, ղեկավար դրույթներ են: Դրանք իրենցից ներկայացնում են միջազգային հարաբերությունների ոլորտում ձևավորված պրակտիկայի առավել ընդհանուր արտացոլումը: Միջազգային իրավունքի սկզբունքը միջազգային իրավունքի նորմ է, որը պարտադիր բնույթ ունի բոլոր սուբյեկտների համար, ինչը պայմանավորված է միջազգային հարաբերությունների կարգավորման ոլորտում դրանց ունեցած կարևորությամբ: Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներն ամրագրող կարևորագույն փաստաթուղթը ՄԱԿ-ի կանոնադրությունն է:

Միջազգային իրավունքի սկզբունքներն են՝

✓ **Պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունք** - պետությունները համարվում են միջազգային հարաբերությունների իրավահավասար մասնակիցներ, նրանք բոլորն ունեն սկզբունքորեն նույն իրավունքները և պարտականությունները,

✓ **Ուժ և ուժի սպառնալիք չգործադրելու սկզբունք** - Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամներն իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելուց ինչպես ցանկացած պետության տարածքային անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ, այնպես էլ Միավորված ազգերի նպատակների հետ անհամատեղելի ցանկացած այլ ձևով,

✓ **Պետական սահմանների անխախտելիության սկզբունք** - Մասնակից պետություններն ինչպես միմյանց, այնպես էլ Եվրոպայի բոլոր պետությունների սահմանները դիտարկում են անխախտելի, և այդ պատճառով նրանք այժմ և ապագայում պետք է ձեռնպահ մնան այդ սահմանների նկատմամբ ցանկացած ոտնձգությունից,

✓ **Պետությունների տարածքային ամբողջականության սկզբունք** - Նշանակությունն է՝ պետության տարածքի պաշտպանությունը ցանկացած ոտնձգությունից,

✓ **Միջազգային վեճերի խաղաղ լուծման սկզբունք** - ՄԱԿ-ի բոլոր անդամներն իրենց միջազգային վեճերը լուծում են խաղաղ միջոցներով, այնպես որ սպառնալիքի տակ չդրվի միջազգային խաղաղությունը, անվտանգությունը և արդարությունը,

✓ **Ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը** - Միջամտություն պետք է համարել պետությունների կամ միջազգային կազմակերպությունների ցանկացած գործողություն, որոնց միջոցով վերջինները փորձում են խոչընդոտել միջազգային

իրավունքի սուբյեկտին լուծել հարցեր, որոնք ըստ էության մտնում են նրա ներքին իրավասության մեջ,

✓ **Մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունք** - պետությունները պարտավոր են հարգել և հետևել մարդու իրավունքներին և հիմնական ազատություններին՝ առանց որևէ խտրականության,

✓ **Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը** - Յուրաքանչյուր ժողովրդի իրավունքը՝ ազատորեն ընտրել իր զարգացման ձևերն և ճանապարհները,

✓ **Պետությունների համագործակցության սկզբունքը** - Պետությունները պարտավոր են իրականացնել միջազգային համագործակցություն տնտեսական, սոցիալական, մշակութային, մարդասիրական բնույթի միջազգային խնդիրներ լուծելու համար, ինչպես նաև պարտավոր են պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և այս նպատակով ձեռնարկել արդյունավետ կոլեկտիվ միջոցներ,

✓ **Միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունք** - Յուրաքանչյուր պետություն պարտավոր է բարեխիղճորեն կատարել Կանոնադրությամբ իր վրա դրված պարտականությունները, որոնք բխում են միջազգային իրավունքի սկզբունքներից և համընդհանուր նորմերից, ինչպես նաև պարտականությունները, որոնք բխում են միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին համապատասխան կնքված միջազգային պայմանագրերից:

Յուրաքանչյուր պետության օրենսդիր մարմին աշխատում է կատարելագործել ներպետական օրենսդրությունը՝ փորձելով ստեղծել իրավական պետություն, որտեղ երաշխավորված են և առավելագույնս ապահովված մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Մարդու իրավունքներով զբաղվող շատ միջազգային կազմակերպություններ էլ ընդունում են իրավական ակտեր, որոնք, իրենց հիմքում ունենալով մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ուղղորդում են պետություններին ընդունած օրենքները համապատասխանեցնել միջազգային չափանիշներին: Չնայած պետությունների՝ մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները ապահովելու ձգտմանը, հանցագործությունները չեն նվազել տարիների ընթացքում, որպիսի հանգամանքը հիմք է հանդիսացել Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (*FIDH*) հիմնելու համար, որի կարևոր անդամ է **Միջազգային քրեական դատարանը**:

Դատարանն առաջին մշտական իրավական կառույցն է, որի իրավասությունների մեջ մտնում է այն անձանց հետապնդումը, ովքեր իրականացրել են՝

- զինվորական հանցագործություններ,
- մարդկության դեմ կատարած հանցագործություններ,

• ցեղասպանություն:

Իրավասությունների շրջանակում նախատեսված է եղել ներառել նաև ագրեսիան, սակայն բանակցությունների ընթացքում կողմերը չեն կարողացել հստակ ձևակերպում տալ և չափանիշներ առանձնացնել այս եզրույթին: Արդյունքում որոշվել է, որ առայժմ դատարանը չի կարող ագրեսիայի հետ կապված հանցագործությունների նկատմամբ արդարադատություն իրականացնել:

Դատարանի գործունեության հիմքում ընկած է 1998թ. ընդունված Հռոմի ստատուտը: Դատարանը կարող է քննել միայն այն հանցագործությունները, որոնք կատարվել են հիմնադրվելուց՝ 2002թ., հետո:

Հարկ է նշել, որ այս դատարանը գործը քննելու վերջին ատյանն է: Այս դրույթով դատարանը պետություններին է թողնում առաջնային հետաքննության իրավունքը և միջազգային հանցագործների նկատմամբ մեղադրանքի հարուցումը: Սակայն, եթե պետության կողմից իրականացվող հետաքննական և դատախազական գործունեությունները չհամապատասխանեն միջազգային դատավարական չափանիշներին, ապա ՄՔԴ-ն իրավունք ունի իրականացնել դատավարություն՝ տվյալ դեպքի հետ կապված: Դատարանը կարող է գործը քննության վերցնել նաև այն դեպքում, երբ պետությունը չի ցանկանում կամ չի կարող հետաքննություն իրականացնել:

Դատարանն իրավասու է քննել միայն այն դեպքերը, որոնք տեղի են ունեցել կա՛մ անդամ պետության տարածքում, կա՛մ անդամ պետության քաղաքացու կողմից:

Սակայն, այստեղ կա մի բացառություն. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կարող է միջնորդող բանաձևի միջոցով Դատարանին փոխանցել ինչ որ հանցագործության իրավիճակ: Նման դեպքի նախադեպ է համարվում Դարֆուրի գործը, երբ ՄԱԿ ԱԽ-ն, օգտվելով իր իրավունքից, գործը փոխանցեց ՄՔԴ-ին, իսկ վերջինս, հետաքննություն իրականացնելով, երկրում կատարվածը որակեց որպես ցեղասպանություն և դատավճիռ կայացրեց:

Շատ երկրներ թերահավատորեն են վերաբերվում ՄՔԴ-ին՝ որպես արդարադատություն իրականացնելու ոչ արդյունավետ գործիքի: Որոշ երկրներ գտնում են, որ այն ոչ մի օգուտ չի տվել, իսկ որոշները սկզբունքորեն դեմ են ՄՔԴ գաղափարին՝ պատճառաբանելով, որ դա սահմանափակում է պետությունների անկախությունը, և ոչ հստակ, լայն իրավասությունների շրջանակ է տրամադրված դատարանին: Ի պատասխան հնչած կարծիքների ՄՔԴ ներկայացուցիչները նշում են, որ շատ երկրներում դատական համակարգը արդյունավետ չէ և մեծ կախվածություն ունի իշխանություններից և շատ ժամանակ դատական համակարգն օգտագործվում է, որպես պայքարը ճնշելու միջոց: Այս համատեքստում է, որ մեծ դեր է ստանձնում միջազգային իրավապաշտպանությունը:

Ինչ վերաբերում է մեզ, ապա Հայաստանը ստորագրել է Հռոմի ստատուտը, բայց դեռևս չի վավերացրել այն: 13.08.2004թ. ՀՀ Սահմանադրական դատարանը որոշեց, որ կանոնադրության որոշ դրույթներ հակասում են Սահմանադրությանը: Օրինակ՝ ՀՀ նախագահի կողմից դատապարտյալներին ներում շնորհելու իրավունքը: Ներկայումս, երբ սպասվում են ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, կարելի է հետևել Ֆրանսիայի օրինակին և ՀՀ Սահմանադրության մեջ նախատեսել առանձին հոդված և Քրեական դատարանի կանոնադրության ընդունումը բացառիկ դեպք ճանաչել: Կարծում եմ Կանոնադրության վավերացումը կհանգեցնի առավելապես դրական արդյունքների:

Կարեն Տոնյան

*ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ*